

ամբարների մէջ ներդաշնակութիւնը վաղուց խախտուել է, ուստի նա անհանգիստ է, դողում է իր հացի համար, ցամաք հացի. փոյթ չէ, որ տունը համարեա գետնափոր է, աղբի մէջ կորած, որ փողոցները անտանելի են, ճանապարհներն անանցանելի. փոյթ չէ, որ նա զրկուած է քաղաքակիրթ կեանքի ամենատարրական յարմարութիւններից, միայն թէ հաց լինի, հաց: Փորի ահաւոր հոգսը բռնել է նրա ամբողջ էութիւնը. բոլոր միւս, աւելի բարձր, աւելի ազնիւ պահանջները ջնջուել են այս մի հատիկ հրամայող պահանջի առաջ: Զուլում է այն տարին, երբ սակաւ է հացը, երբ հորեւորը լիքը չեն, երբ արի ամբարը կիսատ է, թոնիրն ամեն օր չի վառուում, թափայ հացի հոտը տունը չի լցնում: Հաց, հաց... այս խեղճ ժողովուրդն ապրում է միայն հացով, զարմանալի է միթէ, որ հոգևոր աւելի բարձր պահանջները խեղդւում կամ բնաւ չեն զարթնում ստամոքսի հրամայող հոգսի առաջ:

Ա. Ահարոնեան

(Կը շարունակուի)

* *

Երեկոյեան ծաղկոտ սարից
Հովին հօտը տուն կը բերէ.
Յոգնած հօտը միթին սարից
Քնքռւշ եարիս քուն կը բերէ:

Էսօր եարս շատ է խաղցել
Արեգակի շողերի հետ.
Արևի պէս շատ է խաղցել
Շող-մատներով իմ սրտի հետ:

Շող-մատներով, վարդ-մատներով
Իմ սրտի հետ շատ է խաղցել.
Հիմա յոգնել, եղնիկի պէս,
Գրկիս միջին քուն է մտել:

Յոգնած հօտը սար ու քարից
Սիրուն եարիս քուն կը բերէ.
Աղբիւրների, ծաղիկների
Երազներով քուն կը բերէ:

Ա. Դսահակեան